

824:) Այս Պահատուրեան վ., որ Ումիտ օղու Սիմն Եպիսկոպոսին հետ նոր եկած էր Էջմիածնէն, ծանօթ կաթողիկեայ էր (Աւգերեան, 32), եւ նախորդ առաջնորդ Մեծ Մովսեսին օրինակին հետեւելով՝ ժողովրդեան երկու կողմը միաբան պահեց: Ասոր օրերը գաղատացի Կիւլապ օղու Էղիա վ., կաթողիկեայ միսիոնար, ծպտեալ՝ Գաղատիա եկաւ, եւ քիչ ետքն ինքզինք յայտնելով՝ Ս. Հոգի եկեղեցւոյն մէջ քարոզ տուաւ, ժողովուրդն իրարմէ բաժնեց, եւ երկու կողման միաբան հաւանութեամբը՝ կաթողիկեայ մեծամասնութիւնը չորս եկեղեցիներն առաւ, եւ միւս կողմն երեք եկեղեցիները (Աւգերեան, 33—4, Չամչեան 813): Պահատուրեանի մասին ընդարձակագոյնս քիչ ետքը:

Երբ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք այս լուրն առաւ, ուզեց որ Սարգիս Գաղատիոյ առաջնորդ ըլլայ: Սարգիս տեսնելով որ հոն ալ ազգին մէջ կրօնական խռովութիւններ կան, ուղղափառք քաղքին չորս եկեղեցիները գրաւած են, եւ թէպէտ այս վերջնոյն չէր տհաճեր, սակայն չէր ուզեր երկու կուսակցութեանց ալ հակառակ գործել, հրաժարեցաւ ի սկզբան: Վերջապէս զիջաւ, յանձն առաւ եւ ուղեւորեցաւ ի Գաղատիա, ուր ժողովրդենէն փառօք ընդունուեցաւ, եւ զիրենք յորդորեց իրարու հետ սիրով ապրելու: Գաղատացիք իրարու հետ կրօնական կռիւններ կը մղէին. վասն զի «Տաթեւացւոյ հետեւողք» «չարչարէին զաստուածութիւն», իսկ ուղղափառաց մէջէն տգէտներ